**Արձանագրություն N 12**

**ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի մրցույթի փուլի գնահատող հանձնաժողովի նիստի**

**/ՀՀ կառավարության՝ ի դեմս Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության միջև 21.11.2016թ. կնքված վարձակալության պայմանագրի անկախ տեխնիկական աուդիտորական ծառայության ձեռքբերման /**

**<u>Երկիր</u>**

Հայաստանի Հանրապետություն

ք. Երևան 25 մայիսի 2026թ.

**<u>Ընթացակարգ</u>**

Անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման բաց մրցույթի փուլ:

**<u>Ծրագիրն իրականցնող մարմնի անվանումը</u>**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե:

**<u>Ծրագրի անվանումը</u>**

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված ««Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի» շրջանակներում «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերության 2022-2031թ.թ անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերում:

**<u>Նիստին մասնակցում էին՝</u>**

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Քանքանյանը,

Հանձնաժողովի անդամներ Ա. Մարգարյանը, Ա. Սիմոնյանը, Ս. Ասրյանը, Ս. Ալեքսանյանը, Ա. Առուշանյանը, Ա. Սերգոյանը և Մ. Բաբայանը:

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

***Մրցույթի փուլի հրավերի վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները.***

---

ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ ծածկագրով գնման ընթացակարգի մրցույթի հրավերի հայտարարության վերաբերյալ 15.05.2026թ. ստացվել են հարցադրումներ և դրանց վերաբերյալ 19.05.2026թ. տրամադրվել պարզաբանում՝

**Հարց 1** «Աուդիտորի կողմից մատուցված ծառայությունների համար վճարման ենթակա առավելագույն վարձատրությունը կկազմի 500 միլիոն դրամ (ներառյալ բոլոր հարկերն ու տուրքերը): Այս գումարից 2026 թվականի պետական բյուջեով հատկացված 200 միլիոն դրամը նախատեսված է 2022-2025 թվականների համար հետադարձ (փաստաթղթային) աուդիտի ծառայությունների իրականացման համար, մինչդեռ 300 միլիոն դրամը հատկացվում է 2026-2031 թվականների պայմանագրային ժամանակահատվածում (վեց (6) տարի) տեխնիկական աուդիտի ծառայությունների մատուցման համար: Յուրաքանչյուր պայմանագրային տարվա համար աուդիտորի հետ կկնքվի առանձին պայմանագիր:

Խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք կարող ենք դիտարկել ընդհանուր բյուջեի վերաբաշխումը՝ պահպանելով ընդհանուր բյուջեն 500 միլիոն դրամ, բայց, օրինակ, առաջարկելով 200 միլիոն դրամից պակաս 2022-2025 թվականների համար, բայց առաջարկելով ավելի քան 300 միլիոն դրամ 2026-2031 թվականների պայմանագրային ժամանակահատվածում (վեց (6) տարի):

**Պարզաբանում 1** Հիշեցնում ենք, որ Հայտատուն պետք է լրացնի Հավելված 2-ը՝ նշելով տեխնիկական աուդիտի ծառայությունների մատուցման պայմանագրի ընդհանուր առաջարկվող գինը (ֆինանսական առաջարկ) 2022–2031 թվականների համար (ներառյալ բոլոր հարկերը և տուրքերը) :

Բացի այդ, համաձայն Հավելված 2.1-ի, Հայտատուն պետք է ներկայացնի առանձին ֆինանսական առաջարկի ձևաթղթեր՝

• 2022–2025 թվականների ռետրոսպեկտիվ (փաստաթղթային) աուդիտի ծառայությունների համար (ներառյալ բոլոր հարկերը և տուրքերը) , և

• 2026–2031 թվականների յուրաքանչյուր պայմանագրային տարվա համար՝ առանձին(ներառյալ բոլոր հարկերը և տուրքերը) :

Միաժամանակ պարզաբանվում է, որ, Հայտատուն ազատ է իր կողմից առաջարկվող (ծառայությունների) ընդհանուր գնի (ֆինանսական առաջարկի) բաշխման հարցում՝ 2022–2025 թվականների և 2026–2031 թվականների միջև:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հայտերի բացման օրը՝ 01.06.2026թ. ժամը 16:00–ին, (ըստ անհրաժեշտության կարող է հրավիրվել լրացուցիչ նիստ), որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-8, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ | ____________ | Տ. Քանքանյան |
| անդամներ | ____________ | Ա. Մարգարյան |
| | ____________ | Ա. Սիմոնյան |
| | ____________ | Ս. Ասրյան |
| | ____________ | Ա. Առուշանյան |
| | ____________ | Ս. Ալեքսանյան |
| | ____________ | Ա. Սերգոյան |
| | ____________ | Մ. Բաբայան |
| Քարտուղար | ____________ | Ա. Սարգսյան |